ՀԱՆԳԻՍՏ
Տ. ՎԱՐԴԳԵՍ ՍՎԱԳ ՔԱՀԱՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ

1952 թվականի նոյեմբերի 16-ին հանկարծամահ եղավ Բաքվի հայոց Ս. Լուսավորիչ եկեղեցու հովիվ տեր Վարդգես ավագ քահանա Գրիգորյանը։

Հանգուցյալը ծնվել է 1882 թվականին Շամախու շրջանի Քարքանջ գյուղում արհեստավորի ընտանիքում։ Նա իր կրթությունը ստացել է Շամախու ծխական դպրոցում, որն ավարտելուց հետո, երկար տարիներ աշխատել է Շամախու եկեղեցում իբրև դպրապետ, ցանկություն ունենալով նվիրվել հոգևոր կյանքին և դառնալ եկեղեցու սպասավոր։ Հետագայում հանգուցյալը տեղափոխվել է Բաքու, ուր տեղական եկեղեցում շարունակել է աշխատել նույն պաշտոնով, սիրվելով տեղի հավատացյալ համայնքի կողմից իր հնչեղ և դուրեկան ձայնի, ինչպես և իր հավատարմության ու կարգապահության շնորհիվ։ 1916 թվականին նա ձեռնադրվել է քահանա Շամախու շրջանի գյուղերից մեկի համար։ 1918 թվականի թյուրքական արշավանքի օրերին, երբ ամբողջ հայությանն սպառնում էր ֆիզիկական ոչնչացման վտանգը, տեր Վարդգեսը դրսևորել է հայ հոգևորականին հատուկ հայրական խնամք Շամախու հայկական որբեր հավաքելու և խնամելու գործում։ Հասարակական այդ կարևոր աշխատանքի համար տեր Վարդգեսը պարգևատրվել է բարձրագույն հոգևոր իշխանության կողմից լանջախաչով։

Սովետական տարիներին հանգուցյալը երկար քահանայագործել է Շամախու շրջանում և 1945 թվականի սկզբներից տեղափոխվել Բաքվի Ս. Լուսավորիչ եկեղեցու հովվի պաշտոնում։ Նա այստեղ կարճ ժամանակամիջոցում ցուցաբերել է եկեղեցական-հասարակական մեղվաջան աշխատանք, արժանանալով Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ուշադրությանը. 1953 թվականին հանգուցյալը Վեհափառ Հայրապետի կոնդակով պարգևատրվել է վարդապետական լանջախաչով և նշանակվել առաջնորդական փոխանորդի բարձր պաշտոնում։

Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ հանգուցյալի թաղման համար Բաքու էր մեկնել Ս. Էջմիածնի միաբանության պատգամավորությունը, Վարդան Ծ. վարդապետի գլխավորությամբ։ Հանգուցյալի թաղումը կատարվել է մեծ հանդիսավորությամբ, հավատացյալների հոծ բազմության մասնակցությամբ։

Տերը լուսավորի հանգուցյալի հոգին և արդարոց դասին արժանի անի նրան։